ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԱՐՄԱՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՄԱՐՄԱՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԱՐՄԱՐԻԿ 2011Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011 թվականի օգոստոսի 16-ին տեղի ունեցավ Կոտայքի մարզի Մարմարիկ համայնքի ղեկավարի 2011 թվականի առաջին հաշվետու ժողովը:

Ժողովին ներկա էին համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները, ավագանու անդամները, համայնքի ազգաբնակչությունը:

Բացման խոսքով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար՝ Արտակ Պետրոսյանը, մասնավորապես նշելով, որ ժողովի նպատակը համայնքում իրականացված աշխատանքների մասին ներկայացնելն է:

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ղեկավարի գործունեությունը կրթության ոլորտում.
2. Համայնքի ղեկավարի գործունեությունը առողջապահության և սոցիալական աջակցության բնագավառում.

ԶԵԿՈՒՑՈՂ - ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼՍԵՑԻՆ - ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի բնակիչներ՝

Բնականաբար այս կարճ ժամանակահատվածում հնարավոր չէր հասնել մեծ ձեռքբերումների և հաջողությունների, սակայն Ձեզ հետ մենք կարողացել ենք առաջնթաց ապահովել համայնքային նշանակության որոշակի խնդիրների լուծման գործում:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում են եղել սոցիալական, կրթամշակութային ոլորտներին առնչվող խնդիրները: Նախորդ տարիների գործունեության արդյունքները համոզում են, որ նախատեսված ծրագրերը առաջիկա տարիներին ևս շարունակելու են հաջողությամբ իրականացվել:

Համոզված եմ, որ համայնքը կդառնա ավելի բարեկարգված, իսկ բնակիչների հոգսերն ու խնդիրները կլինեն ավելի թեթևացած:

Հաշվի առնելով համայնքի բնակչությանը հուզող խնդիրների բազմազանությունը, գյուղապետարանը դրանց լուծման արդյունավետությունը բարձրացնելու և բնակիչների անմիջական կարծիքը հաշվի առնելու նպատակով որդեգրվել է լայն համագործակցության գործելաոճ:

Տարբեր խնդիրների մասով ստացվել են քաղաքացիների 58 դիմումներ, որոնց վերաբերյալ համայնքի ղեկավարը կայացրել է 15 որոշումներ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- Համայնքի ենթակայությամբ գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 123 աշակերտ: Պարբերաբար տեղի է ունեցել հանդիպումներ աշակերտների հետ, քննարկվել են կրթությանը վերաբերվող տարբեր հարցեր:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

- Համայնքի բնակչության սոցիալական ապահովության խնդիրների լուծման համար բյուջեում նախատեսվել է 1000.0 հազար դրամ:
- Ամանորի սուրբ ծնունդի, մարտի 8-ի տոնակատարությունների շրջանակներում, ինչպես նաև դպրոցական հաստատությունում սովորող 1-ին դասարանի շուրջ 7 երեխաներ ստացել են նվերներ:
- ՀՀ Ազգային տոներին և հիշատակի օրերին կազմակերպված բոլոր տոներին ուշադրության կենտրոնում են եղել Հայրենական Մեծ պատերազմի վետերանները, Արցախյան պատերազմին մասնակցած ազատամարտիկները, նրանց ցուցաբերվել են դրամական օգնություններ:

ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ